ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի

2014 թվականի մայիսի 30-ի թիվ 2 որոշմամբ – հրապարակվում է

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3-ՏԿՆ-14/10

Պատվիրատուն՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, որը գտնվում է ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 28 հասցեում, ստորև ներկայացնում է N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3-ՏԿՆ-14/10 ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի վերաբերյալ ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ պարզաբանումը:

Հարցադրում 1: Խնդրում եմ նշեք թե որտեղից կարող եմ վերծնել տեխ. բնութագրի բացատրությունը կամ հուշեք որտեղից կարելի է վերծնել նմուշ:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 29.05.2014թ.:

Պարզաբանում 1: Հայտնում ենք, որ N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3-ՏԿՆ-14/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգով ձեռքբերվող ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կարիքների համար՝ ինքնագնաց ճանապարհաշինարարական, շինարարական և այլ մեքենամեխանիզմներին տրամադրվող տեխնիկական վկայագրերի տպագրական աշխատանքների տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 3 հավելվածում, իսկ բացատրությունը առկա է նշված պայմանագրի նախագծի N 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագրում, իսկ ձևը սահմանված է ՀՀ կառավարության 16.12.2004թ. N 1847-Ն որոշման 2-րդ հավելվածով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ԾԻԳ» ՊՀ-ի գնումների և պայմանագրերի կառավարման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար՝ Տիգրան Ջանոյանին:

Հեռախոս՝ (010) 59 00 20:

Էլ. փոստ՝ tjanoyan@transportpiu.am:

Պատվիրատու՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն: